Արձանագրություն 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.12.2017թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Մ. Սարգսյան – ՀՀ ՖՆ գործերի կառավարման վարչության պետ

Անդամներ

Ա. Մարտիրոսյան – ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի պետ

Ա. Գրիգորյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ

Կ. Սիրունյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի տնտեսվար

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան՝ ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի տնտեսագետ

Բացակայում է

Հ. Ղազարյան - ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/18» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«ՖԼԵՇ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01808789, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ե. Կողբացի 30, էլ հասցե՝ flashltdtender@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/18 ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկած գինը ներկայացվում է ստորև՝

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ)		
		«ՖԼԵԾ» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	Վառելիք	13 910 666,67	2 782 133,33	16 692 800

Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՖԼԵԾ» ՍՊԸ-ին:
2. Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:
3. Հարցում կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

5. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը</u>**

ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-17/18 ծածկագրով ընթացակարգի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել հրավերի փաստաթղթերի ներկայացման և եզրակացության ներկայացման օրվանից հետո ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Մ. Սարգսյան
հանձնաժողովի անդամներ՝	_____	Ա. Մարտիրոսյան
	_____	Կ. Սիրունյան
	_____	Ա. Գրիգորյան
Գնումները համակարգող ՝	_____	Ա. Աղաբաբյան